

1. «Ինեկոբանկ» ՓԲԸ-ն (իրավաբանական հասցե՝ ՀՀ, Երևան, Թումանյան 17), այսուհետ՝ Բանկ, գնառաջարկների ներկայացման հարցման (ԳՆՀ) ծանուցման միջոցով հրավիրում է իրավաբանական և/կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ Մասնակիցներին) ներկայացնելու գնառաջարկներ UPS սարքեր 40-45KW հզորության, մոդուլային նաև մինչև 90KW հզորությունն ավելացնելու հնարավորությամբ վերաբերյալ:
2. Գնառաջարկներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 12.09.2024, 17:00

- Էլեկտրոնային տարբերակով՝ procurement@inecobank.am էլ. Հասցեով՝ նամակի վերնագրում նշելով ԳՆՀ կոդը - 12092024/ UPS սարքեր 40-45KW: Գնառաջարկի փաթեթը անհրաժեշտ է ուղարկել «.rar» տարբերակով, կողավորված, իսկ կոդը ուղարկել ԳՆՀ ավարտից հետո procurement@inecobank.am էլ Հասցեով մինչև 13.09.2024թ-ին մինչև ժ. 11:00 :

- Փաստաթղթային տարբերակով փակ, կնքված ծրարով՝ “Ինեկոբանկ” ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով՝ ծրարի դարձերեսին նշելով՝

- ԳՆՀ կոդը -13.09.2024/ UPS սարքեր 40-45KW հզորության
- մասնակցի անվանումը,
- ներկայացման ամսաթիվը,
- ստացող՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ - Բյուջետավորման և հսկողության բաժին:

3. Հավելյալ տեղեկությունների համար կարող եք դիմել՝ Կոնտակտային անձ, գնումների բաժին՝ հեռ(+3743002272)
4. Գնառաջարկների ներկայացման հարցումը (ԳՆՀ) չի համարվում հրապարակային մրցույթ: Այն հանդիսանում է շուկայում առկա գնառաջարկների հավաքագրման գործընթաց, որի արդյունքում կարող է ընդունվել որոշում որևէ առաջարկի ընդունման և կամ մերժման վերաբերյալ: Գնառաջարկների ներկայացման հարցման գործընթացը չի կարգավորվում ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 463-465, 1043-1044 հոդվածներով և ‘Հրապարակային սակարկությունների մասին’ ՀՀ օրենքով:
5. Մասնակիցներն ինքնուրույն են հոգում Գնառաջարկի պատրաստման և ներկայացման հետ կապված իրենց ծախսերը, իսկ Բանկը որևէ պատասխանատվություն և պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ ԳՆՀ-ի գործընթացի ընթացքից և արդյունքներից:
6. Բանկն իրավունք ունի մերժել Գնառաջարկը, եթե Մասնակիցն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոնների (Հավելված 1) դրույթներից որևիցե մեկը:
7. Մասնակիցը պետք է ներկայացնի ստորև նշված փաստաթղթերի սկանավորված օրինակները՝ ստորագրված և կնքված լիազոր անձի կողմից՝

- Գնառաջարկ,
- Մատակարարման ժամկետների վերաբերյալ տեղեկատվություն,
- Վճարման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն (կանխավճարի չափ),
- Բանկի կողմից սահմանված էթիկայի կանոններին համաձայնությունը
- (ցանկացած այլ չափանիշ՝ սահմանված Կարգի 6.3.4.3.1 կետով):

8. Գնառաջարկը պատրաստելիս անհրաժեշտ է ուղղորդվել ստորև լրացված ցանկով:
9. Գնառաջարկը լրացնելիս Մասնակցին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ թողնելով անփոփոխ պահանջվող նկարագրերը:
10. Գնառաջարկը պետք է ներառի բոլոր ծախսերը և ՀՀ տարածքում գործող պարտադիր վճարումները և հարկերը: Գները անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ դրամով:
11. Գնառաջարկները պետք է լինեն ուժի մեջ առնվազն 30 աշխատանքային օր՝ հաշվարկված գնառաջարկների ներկայացման սահմանված վերջնաժամկետից:
12. Մասնակիցը կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Սույն կանոնի խախտման դեպքում՝ տվյալ հայտատուի բոլոր գնառաջարկները մերժվում են՝ առանց հաշվի առնելու վերջիններիս առավելությունները:

13. Վճարումները կատարվում են ինեկորանկում բացված բանկային հաշվի վրա, Պատվիրատուի պատասխանատու անձի կողմից վավերացված կատարողական ակտերի հիման վրա:
14. Վերը նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված Գնառաջարկները չեն դիտարկվի:

ԳՆԱՌԱՋԱՐԿ

«Ինեկորանկ» ՓԲԸ-ի UPS սարքեր 40-45KW գնառաջարկների ներկայացման հարցում

Հ/Հ	Անվանումը	Տեսակ	Քանակը	Միավորի գինը Ներառյալ ԱԱՀ
1	UPS սարքեր 40-45KW հզորության	UPS սարքեր 40-45KW հզորության, մոդուլային լաև մինչև 90KW հզորությունն ավելացնելու հնարավորությամբ	2 հատ	

Առաջարկում ենք կատարել մատակարարումը _____ օրացուցային օր ժամանակահատվածում:
Պահանջվող կախնավճար _____ դրամ:

_____ Մասնակցի/կազմակերպության անվանումը

_____ Լիազորված ներկայացուցչի պաշտոնը, ստորագրությունը՝

" _____ " _____ 2024թ
Կ.Կր